Գրիգորը Գեղրոն գիւղից 1699 թուին նուիրում է մի զանգակ այսպիսի արձանագրութեամբ. «Ցիշատակ է Գեղրոնցի Առաքելի որդի Գրիգորին ի դուռն սուրբ Գեղարդին, թուին ՌՃԽԸ». Գեղրոն գիւղը գտնուում է Հրազդանի ափին, Քանաքեռից ոչ հեռու (*)։

Դաւիթ փոքրը վախճանուել է 1705 թուին և նորա յաջորդել է Դանիէլ վարդապետ, դարձեալ Պռոշեաններից, որի թեթև չինարարութեան արձանագրութիւնը ՌՃԾԷ թուականից գտնուում պարսպի մեծ դարբասի գլխին (Խաչբ. Ա. 268, պատկ. 174բ)։ Սորա ժամանակ վանքը Ռուսաստանի արևելեան վաճառականներից (այսինքն արևելեան Հայաստանի հայերից) նուէր է ստանում ասեղնագործ եպիսկոպոսական մի գեղեցիկ թագ իւր վակասով. թագի մի երեսը Աստուածածինն է, մանուկ Յիսուսը գրկին (պատկ. 175), միւս երեսին յարուցեալ Յիսուսը, մարգարտաշար կոթով բահը ձեռքին, իբրեւ պարտիզպան. Մագդաղենացի Մարիամ նստած գերեզմանի վերայ (Յովհ. Ի. 15). երկուսն էլ մարգարտաշար նիմբուսներով, դէմքերը վերին աստիճանի նուրբ և գեղարուեստական. պարտէզի դաշտը ծաղիկներով ծածկուած (պատկ. 176)։ Առաջին երեսի արձանագրութիւնն է. «Թվ. ՌՃԿԴ (1715) ի ամսեանն Փետրվարի ԺԵ», միւս երեսին՝ յարութեան տեսարանի տակ. «Սբ. Գեղարդի տուաք թագս յշկ. Ուռուս|ճուղի յրաւելեան վճռկնց. զնծնկիւն վէքիլ Նաւորդի եւ Վրդանիսի ձեռամբ շինեցի»։ Վակասի պատկերագրութիւնը. մէջ տեղում նստած է Յիսուս, ձախին խաչազարդ գունդ բռնած, աջով խաչակնքում է (պատկ. 177), երկու կողմից վեց վեց առաքեալ, սիւներով բաժանուած և առանձին առանձին կամարների տակ, բոլորի նիմբուսները, սիւներն ու կամարները մարգարիտներով կազմուած, վերջին դատաստանն է ներկայացնում։ Արձանագրութիւնն է. «Ցշկ. է սբ. Գեղարդին ընդ թագին ձեռամբ Վրդանէսին. թվին ՌՃԿԴ-ին շինեալ», որով և թուականն ու արուեստաւորը որոշուած։ Սակայն երկուսի արուեստների մէջ կայ մեծ տարբերութիւն, թագի պատկերագրութիւնը միանգամայն արևմտեան դրոշմ է կրում, բայց ոչ վակասը. տարբեր են նաեւ երկուսի արձանագրութիւնների հնագրական ձեւակերպութիւնները, թէեւ երկուսն էլ նոյն թուականն ունին, նոյն վանքին նուիրուած և վակասի արձանագրութեան մէջ թագի յիշատակութեամբ։ Այս տարբերութիւնը բացատրել կարելի է տարբեր անձանց կողմից պատրաստուած նախատակներով, բայց ասեղնագործութիւնը մի և նոյն անձի, Վրդանիսի գործն է։



Պատկեր 174բ.

Դանիէլի (*) յաջորդն էր, հաւանօրէն, Եղիսէ վարդապետ Նորեցին, որ յիշատակւում է 1733 թ. «Ի թվին ՌՃՁԲ. յունիսի ԻԵ. ի յառաջնորդ (s!) սբ. Գեղարդես. վանիցն Եղիսէ վրդպտն. ի գեղջէն Նորեցի»(**)։ Նոյն թուականից մինչև 1749 վանքի վանահայրն էր Պետրոս Ջահկեցին, որ հետզհետէ այլ և այլ հողեր է գնել կամ ձեռք բերել վանքի համար(***)։ Ոմն մահտեսի Պետրոսի կողմից 1750 թուին արծաթի, քանդակազարդ մի սկիհ է նուիրուած Գեղարդի վանքին՝ յիշատակ իւր կողակից Մարինոսի հոգուն. «Ցիշատակ. է սկիհս մհտէսի Պետրոսին եւ կողակցուն

(*) Զաքարիա Սարկ. Բ. 17։ Ջամբռ, 141, 285, 287։ Սմբատեան Մեսրոպ արքեպիսկ., Գեղարքունի, 223։ Ալիշան, Այրարատ, 228։

(*) Դանիէլի մասին Խաչբակեանք, Ա. 268, (Ցաւել. Բ. 40)։

(**) Ձեռ. Էջմ. № 2103/2065, ՂԲ. Ձեռագիրը Տաթեւացու քարոզների առաջին հատորն է, գրուած Թովմա Մեծոփեցու ձեռքով, որ յետոյ ընկել է Գեղարդայ վանքը. տես մեր Թովմա Մեծոփեցու կեանքը, եր. ԻԸ. և 15։

(***) Ջամբռ, 273/4։